

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԱՐՀԵՏՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ
ГОСУЧРЕЖДЕНИЙ
АРМЕНИИ



UNION OF STATE, LOCAL
GOVERNMENT AND PUBLIC SERVICE
EMPLOYEES OF ARMENIA

«18» փետրվարի 2020 թ.

N 18-01

Հայաստանի Հանրապետության վարչապետ
պարոն Ն. Փաշինյանին

Հարգելի պարոն Փաշինյան

Վերջերս, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանը «Լրագիր» կայքին տրված հարցազրույցում նշել է՝ *«միշտ դժվար է գտնել այն սահմանը, թե որտեղ է վերջանում աշխատողի իրավունքն ու որտեղ է սկսվում բիզնեսինը: Եթե մենք չենք կարողանում այդ սահմանը գտնել, ապա ավելի լավ է մի փոքր տուժի աշխատողի իրավունքը, քան բիզնեսի, որովհետև դա ուղիղ ազդում է նաև ներդրումների վրա: Երբ շատ է ֆետիշացվում աշխատողի իրավունքը, ներդրողն էլ չի ուզում գալ այդ երկիր, որտեղ իր կյանքը բացի հարկայինից սկսում են ուտել նաև աշխատանքային տեսչությունը և այլ կառույցներ»:*

Աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարից նմանատիպ, վաղուց դարձնապարսաճ թեզերի արժարժումը կասկածի տակ է դնում նրա մասնագիտական կարողությունները և տվյալ պաշտոնին համապատասխանելու հարցը, մանավանդ, որ տեսչական մարմնի գործառույթը իրավունքների միջև սահման գծելու հետ ոչ մի առնչություն չունի: Ընդհանրապես՝ նմանատիպ արտահայտությունները հարիր չեն ցանկացած պետական պաշտոնյային, բայց երբ դրանք հնչեցվում են աշխատանքային պայմանների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի ղեկավարի կողմից՝ շահերի բախման հետ կապված որոշակի հարցեր են առաջանում, մանավանդ, որ Հ. Ավագյանը վերջին

տարիներին եղել է բիզնես համայնքի շահերը ներկայացնողը, իսկ համաձայն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի՝ տեսչական մարմինը պարտավոր է իր գործունեությունը կազմակերպել այնպես, որ բացառվի շահերի բախումը:

Հ. Ավագյանը նշված հարցազրույցով հաստատեց, որ իր գաղափարները ճիշտ հակառակն են այն արժեքներին, որոնց կրողը պետք է լինի վերոնշված պաշտոնը զբաղեցնող անձը:

Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի մոտ 12000 աշխատողների շահը ներկայացնող արհմիությունը իր վրդովմունքն է հայտնում առ այն, որ պետական պաշտոնյան Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացուն, աշխատող մարդուն բացահայտ հակադրում է, նույնիսկ ստորադասում է բիզնեսին ու ներդրումներին: Նման պահվածքը դեմ է հեղափոխության որդեգրած արժեքներին:

Հույս ենք հայտնում, որ մեր մտահոգությունները հաշվի կառնվեն:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ՃՀՄ նախագահ՝

Ա. Ասատրյան

պատճե